ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՐԴՈՅՈՒՄ

Մայիսի 11-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ տալով Մարսելի հայությանը, Իր շքախմբի անդամներով առաջին անգամ հովվապետական այցելության է մեկնում Բորդո՝ արևմտյան Ֆրանսիայի կարևոր քաղաքներից մեկը, որտեղ ապրում է հայկական մի փոքրիկ համայնք:

Բորդոյի Մերինյան օդանավակայանում Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորեցին տեղի Հայ մշակութային միության անդամները՝ գլխավորությամբ միության նախագահ դոկտ. Թորգոմ Մկրտիչյանի, քաղաքի այլ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին նաև Շաբան Դելմասի ներկայացուցիչ պրն. Տուտոնը՝ որպես քաղաքապետարանի ներկայացուցիչ, Բորդոյի կաթոլիկ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ մոնսենյոր Լարոզան, ինչպես նաև քաղաքի քույր եկեղեցիների հոգևոր այլ ներկայացուցիչներ:

Օդանավակայանում երկու հայ երեխաներ, հայկական տարազներ հագած, Հայոց Հայրապետին մատուցեցին բարիգալստյան ավանդական աղն ու հացը:

Ապա Հայոց Հայրապետը առաջնորդվեց օդանավակայանի պատվո դահլիճ, ուր Իր ողջույնն ու օրհնությունը տվեց բոլոր ներկաներին:

Այնուհետև Հայոց Հայրապետը Իր շքախմբով և ուղեկից ավտոմեքենաների շարասյունով առաջնորդվեց քաղաքի «Ֆրանտել» հյուրանոց, Իրեն հատկացված մասնավոր հարկաբաժին:

Նույն օրը, երեկոյան, հյուրանոցում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել տեղի «Sud-Ouest» թերթի թղթակցին և պատասխանել նրա մի շարք հարցերին:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ
ԲՈՐԴՈՅԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺԱԿ ՇԱԲԱՆ ԴԵԼՄԱՍԻ ՀԵՏ

ԼԱՅՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԵՎ Տ. ԴԱՎԻԹ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԻ ԵՎ ԼԻՈՆԻ
ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՐԴՈՅԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՇԱԲԱՆ ԴԵԼՄԱՍԻՆ

Մայիսի 12-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը Իր շքախմբի անդամներով պաշտոնական այցելություն տվեց Բորդոյի քաղաքագլուխ պրն. Շաբան Դելմասին՝ Ֆրանսիայի հանրապետության նախկին վարչապետին:

Հարգելի պրն. քաղաքագլուխը քաղաքապետարանի շենքի մուտքի առաջ, շրջապատված իր անմիջական գործակիցներով և պետական այլ ներկայացուցիչներով, դիմավորեց Հայոց Հայրապետին և Նրան առաջնորդեց ընդունելության դահլիճ, որտեղ հարգամեծար խոսքերով ողջունեց Նրա ժամանումը Բորդո:

Ի պատասխան պրն. քաղաքագլխի բարիգալստյան խոսքի, Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ ողջույնի խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԲՈՐԴՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ
(12 մայիսի 1979 թ.)

Մեծարգո տիար Քաղաքապետ,

Գոհություն կուտանք Աստուծո Ամենակալին, որ երջանիկ պահը պարգևեց Մեզի, այցելելու ձեր այս գեղեցիկ քաղաքը և Մեր ողջույնն ու օրհնությունը բերելու Ձերդ Գերազանցության:

Ուրախ ենք շատ, որ անձնապես Ձեզի ծանոթանալու պատեհությունը ընծայեցիք Մեզ, կազմակերպելով այս ջերմ ընդունելությունը: Հաճեցեք ընդունիլ Մեր խորագոյն շնորհակալությունը հանուն Հայ առաքելական եկեղեցվո, որուն առաջին սպասավորը ըլլալու պարտականությունը ունինք: Այդ հանգամանքով է, որ կգտնվինք ձեր մեծ երկիրը՝ Ֆրանսա, Մեր օրհնությունները բաշխելու համար Մեր հավատացյալ ֆրանսահայ զավակներուն, որոնք կբնակին նաև ձեր քաղաքին մեջ: Այս երջանիկ առիթով Մեր սեպուհ պարտականությունը կնկատենք Մեր երախտագիտությունը ներկայացնելու Ձերդ Գերազանցության այն բոլոր ազատություններուն և նպաստավոր պայմաններուն համար, զոր կվայելեն հայերը նաև Բորդոյի մեջ՝ պահպանելու համար իրենց կրոնական և մշակութային ավանդությունները, մնալով հավատարիմ և շինարար քաղաքացիները ֆրանսական փառավոր հայրենիքին:

Մեր Ֆրանսա այցելության հիմնական նպատակն է ավելի ամրապնդել հայկական եկեղեցիները և կրոնական համայնքները, որպեսզի ավելի ու ավելի պայծառանա քրիստոնեական հավատքը մեր ժողովուրդի գիտակցության մեջ, որպեսզի ավելի ու ավելի արմատավորվին քրիստոնեական բարոյական արժեքները երիտասարդ սերունդներու հոգիներուն մեջ, որովհետև Մենք կհավատանք, թե Քրիստոսի Ավետարանը գուցե ավելի քան երբեք այժմեական է նյութականացած արդի քաղաքակրթության ժամանակաշրջանին, որպեսզի մարդկությունը գտնե իր բարոյական ու ընկերային հավասարակշռությունը և հնարավոր դառնա վերակառուցումը նոր աշխարհի մը, ուր ըլլա ավելի ազատություն, ավելի արդարություն, ավելի խաղաղություն բոլոր մեծ ու փոքր ժողովուրդներու համար հավասարապես:

Մենք կմաղթենք, որ մեր եկեղեցվո զավակները այս գիտակցությամբ

ապրին ու գործեն Ֆրանսական մեծ ժողովուրդի ծոցին մեջ՝ միշտ պատրաստ իրենց համեստ նպաստը բերելու Ֆրանսայի բարօրության ու ծաղկումին:

Թույլ տվեք, մեծահարգ Քաղաքապետ, Ձեզի ներկայացնել նաև Մեր ամենաբարի մաղթանքները, որ Աստված շնորհե Ձեզի ամուր քաջառողջություն և գործելու անսպառ եռանդ ու մշտանորոգ ներշնչումներ՝ շարունակելու Ձեր առաքելությունը, ծառայելու ձեր ազնիվ և ազատասեր ժողովուրդին, այլև միջազգային համերաշխության ու աշխարհի խաղաղության աստվածահաճո դատին:

Թող Աստված հավետ բարօրության, առատության և խաղաղության մեջ պահպանե ֆրանսական հայրենիքը:

Թող Աստված հավետ պայծառ պահպանե ֆրանսական ազգի հանճարի լույսը:

Թող Աստված օրհնե ձեր այս գեղեցիկ քաղաքը և անոր բոլոր բնակիչները: Ամեն:

Բարիգալստյան և ողջույնի խոսքերից հետո Բորդոյի քաղաքապետարանում տեղի ունեցավ ջերմ զրույց Հայոց Հայրապետի և քաղաքագլխի միջև:

Այս առթիվ տեղի ունեցավ հյուրասիրություն, և փոխանակվեցին հուշանվերներ:

ԱՅՑ ԲՈՐԴՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԼՈՒԻ ՎԵՐԺԵԻՆ

Նույն օրը, ժամը 12-ին, Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Իր շքախմբի անդամների, ինչպես նաև Բորդոյի հայ համայնքի ղեկավար ներկայացուցիչների, պաշտոնական այցելություն տվեց Բորդոյի մեծահարգ նահանգապետ, Նորին Վսեմություն Լուի Վերժեին:

Նահանգապետարանի դարբասի առաջ մեծարգո նահանգապետը իր տիկնոջ հետ դիմավորեց և ողջունեց Հայոց Հայրապետի ժամանումը և Նրան առաջնորդեց նահանգապետարանի ընդունելության դահլիճ, ուր հավաքվել էին նահանգապետարանի բարձրաստիճան պաշտոնյաներ:

Ընդունելության ընթացքում Հայոց Հայրապետը և պրն. նահանգապետը ճառեր և հուշանվերներ փոխանակեցին: Վերջում տեղի ունեցավ հյուրասիրություն, և Հայոց Հայրապետը լավագույն տպավորություններով հրաժեշտ տվեց պրն. նահանգապետին և ներկա բոլոր հարգարժան պետական պաշտոնատարներին:

* *
*

Նույն օրը, ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունեց այցելությունը Բորդոյի «Հայ մշակութային միության» ներկայացուցիչների և զրույց ունեցավ նրանց հետ:

Բորդոյի «Հայ մշակութային միություն»-ը նոր կազմակերպություն է, որն ունի իր ակումբը և աշխատում է Բորդոյի հայկական համայնքում կենդանի պահել հայկական ազգային ավանդությունները և աշխուժացնել մշակութային կյանքը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԲՈՐԴՈՅԻ ՍԵՆՏ-ԱՆԴՐԵ ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 13-ին, կիրակի: Տոն Երևման ս. Խաչի:

Առավոտյան ժամը 8.30-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունեց այցելությունը Բորդոյի կաթոլիկ արքեպիսկոպոս մոնսենյոր Մազիեի: Հայոց Հայրապետի և Բորդոյի արքեպիսկոպոսի միջև տեղի ունեցավ եղբայրական ջերմ զրույց:

Բորդոյի հայ համայնքը դեռևս իր սեփական եկեղեցին չունի: Դրա համար այսօրվա ս. պատարագը մատուցվեց Բորդոյի Սենտ-Անդրե միջնադարյան փառավոր Մայր տաճարում: Օրվա պատարագիչն էր հայրապետական շքախմբի անդամ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էին ավելի քան 1500 հայ և ֆրանսիացի հավատացյալներ: Ուխտավոր հայերը այս առթիվ եկել էին ոչ միայն Բորդոյից և նրա շրջակայքից, այլ նաև Տուլուզից, Անգուլեմից, Պոյից, Մարսելից և այլ քաղաքներից:

Օրվա ս. պատարագի երգեցողությունը կատարում էր Մարսելից ժամանած ս. Սահակ-Մեսրոպ երգչախումբը:

Հայկական ս. պատարագին ներկա էին նաև քաղաքի եկեղեցական, պետական և քաղաքային իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Նախքան ս. պատարագն սկսվելը Հայոց Հայրապետին ուղղված ողջույնի և բարիգալստյան եղբայրական խոսք ասաց Բորդոյի արքեպիսկոպոսի փոխանորդ մոնսենյոր Ֆրետլիերը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը Երևման ս. Խաչի տոնի առիթով «Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր» սաղմոսի բնաբանով:

Հավարտ ս. պատարագի ավելի քան 500 հայ և օտար հավատացյալներ ս. հաղորդություն ստացան:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 13-ին, Բորդոյի «Հայ մշակութային միություն»-ը, ի պատիվ Հայոց Հայրապետի, ողջերթի ճաշկերույթ էր կազմակերպել Բորդոյի «Ֆրանտել» հյուրանոցում՝ մասնակցությամբ ավելի քան 250 հրավիրյալների: Ճաշկերույթին հրավիրվել էր նաև Բորդոյի արքեպիսկոպոս, մոնսենյոր Մազիեն:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Ճաշկերույթի բացումը կատարեց «Հայ մշակութային միության» նախագահ պրն. Թորգոմ Մկրտիչյանը՝ նշելով, որ այս օրը Բորդոյի հայ համայնքի համար «հույսի օր է, ազգային հպարտության օր է, հուզումի և երախտագիտության օր է՝ շնորհաբեր ներկայությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, որ անձամբ մեզի բերած է օրհնությունները մեր հավատքի դարավոր կեդրոն և Սրբություն Սրբոց Մայր Աթոռ ս. Էջմիածնեն և ողջույններ մեր վերածնված մայր հայրենիքեն:

Սփյուռքի հայությունը ամեն տեղ ծանր և դժվարին օրեր կապրի, բայց հերոսական ճիգեր կգործադրե հայ մնալու և հայ ապրելու համար՝ բոլորված հայ եկեղեցիին շուրջ, փրկարար հովանիին ներքև Մայր Աթոռ ս. Էջմիածնի»:

Այնուհետև խոսք առավ Տուլուզի Հայ մշակութային միության նախագահ դոկտ. Հովհաննես Ռուստամյանը և, հանուն Տուլուզի հայ համայնքի, ջերմորեն ողջունեց ներկայությունը Հայոց Հայրապետի՝ որդիական հավատարմություն հայտնելով Մայր Աթոռ ս. Էջմիածնին և անոր արժանավոր Գահակալին:

Ճաշկերույթի ընթացքում գործադրվեց նաև գեղարվեստական բովանդակալից մի հայտագիր՝ բաղկացած երգերից, արտասանություններից և նվագից:

Բորդոյի հայոց «Մասիս» նորակազմ երկսեռ երգչախումբը ճաշկերույթի խանդավառությունն ավելացրեց հայրենասիրական և ժողովրդական երգերի իր հաջող կատարմամբ:

Այս առթիվ ճառերով հանդես եկան նաև Բորդոյի արքեպիսկոպոս, մոնսենյոր Մազիեն և տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք առավ նաև Հայոց Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ԲՈՐԴՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Աստուծո գոհություն պետք է տանք, որ Ֆրանսա Մեր այս ուղևորությունը Մեզի պարգևեց բազմաթիվ ուրախ օրեր: Հիմա Մենք ուրախ ենք այստեղ ալ, ձեր մեջ, Բորդոյի մեջ գտնվելով, ուր եկած են նաև Տուլուզի և շրջակայքի հայության ներկայացուցիչները:

Ճիշտն ըսելով, Մենք չէինք սպասեր այսքան խանդավառ մթնոլորտ և այսքան բազմամարդ հայություն: Եվ ոչ միայն համրանքը ի նկատի ունինք, այլ նաև այն ոգին, որ կեռա, կշարժի ձեր մեջ: Այդ ոգին սքանչելի կերպով արտահայտեցին այստեղ երկու խոսողները՝ դոկտորը, հանուն Բորդոյի հայության, և հետո հարգելի ներկայացուցիչը Տուլուզի: Երախտագիտական խորունկ զգացումով պետք է այստեղ արտահայտենք Մեր գոհունակությունը այն բոլոր պատիվներուն համար, որ եղան Մեր անձին նկատմամբ ձեր քաղաքի կրոնական իշխանություններուն, արքեպիսկոպոս Մարզիեի, ինչպես նաև ձեր պետական և քաղաքային իշխանությանց կողմե: Ձեր մեծահարգ նահանգապետը և քաղաքապետը, որոնք հայտնի անուններ են, ջերմ խոսքերով ընդունեցին Մեզ: Այդ բոլորը, այդ հարգանքն ու ուշադրությունը Մեր անձի միջոցով կերթար դեպի հայ եկեղեցին և դեպի մեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը: Ինչպե՞ս Մենք երախտապարտ չըլլանք և ձեզի հետ մեկտեղ չգոչենք՝ Vive la France génereuse!

Ինչո՞ւ համար Կաթողիկոսը արտասահման կուգա, պիտի հարցնեք դուք Մեզի: Նախ՝ իբրև հոգևոր պարտականություն: Ամեն եկեղեցվո պետ պարտավոր է ժամանակ առ ժամանակ այցելության երթալու իր եկեղեցիներուն, իր հավատացյալներուն՝ ճանչնալու համար զիրենք ավելի մոտեն և միասին աղոթելու համար անոնց հետ աղոթքի տուներուն մեջ: Ապա նաև հետաքրքրվելու անոնց հոգևոր, բարոյական կյանքով, նպատակ ունենալով՝ հորդորներով, խորհուրդներով խրախուսելու զանոնք, որպեսզի հաստատ մնան իրենց քրիստոնեական հավատքի վեմին վրա, հավատարիմ մնան մեր առաքելական եկեղեցվո ավանդություններուն, հավատարիմ մնան մեր հավատքի մոտ երկնազարամյա կեդրոն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, ուրկե Աստուծո օրհնությունը կբաշխվի մեր ազգի բոլոր զավակներուն, ուր որ ալ

գտնվին անոնք, Հայաստանի մեջ թե Հայաստանեն դուրս, Ատլանտյանի կամ Խաղաղականի ափերուն: Անհավասիկ Մեր հիմնական մտահոգությունը, Մեր առաքելության հիմնական նպատակը:

Անշուշտ ավելի բնական կըլլար և ավելի ցանկալի, որ մեր ազգը իր մայր հայրենիքի հողամասին վրա ապրեր, ինչպես բոլոր ժողովուրդները այս աշխարհի վրա: Բայց մեր ողբերգական պատմությունը այնպես ընթացավ, այնպիսի ծանր ճակատագիր ունեցավ հայ ազգը իր մայր հողին վրա, որ իր կամքեն անկախ, ստիպվեցավ անընդհատ գաղթել, ցրվիլ և ապսպիսով ստեղծվեցավ հայկական սփյուռքը: Եվ ասիկա ոչ միայն մեր ժամանակներուն, այլ տակավին հնագույն ժամանակներեն սկսյալ, տեսակ մը ճակատագիրը եղավ մեր ժողովուրդին: Այսպիսով մեր նախնիք կարողացան նաև օտար հողի վրա ինքզինքնին պահպանել, ոտքի կանգնիլ, աշխատիլ, ստեղծագործել և իրենց կյանքի պատմությունը արձանագրել ընդհանուր հայոց պատմության մեջ:

Եվ ինչպես անցյալի մեջ, նույնպես և այսօր հայ եկեղեցվո նվիրական առաքելությունն է պահպանել հայ ժողովուրդի ինքնությունն ու միասնությունը:

Ու մենք երջանիկ ենք, որ այստեղ ևս, այս փոքրիկ հայությունը ճիգեր ի գործ կդնե ավելի ու ավելի կազմակերպված ձև տալու համար Բորդոյի, Տուլուզի և շրջակայքի հայության կյանքին, համայնքային եկեղեցական կյանքին:

Ձեզի բոլորիդ Մեր ամենաբարի մաղթանքները և առատ օրհնություններ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն: